ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

Ի պատասխան № **SILD-AFG-14 «Արաքս, Արթիկ, Ապարան, Բաղրամյան, Թալին և Նաիրի համայնքների համար բազմաֆունկցիոնալ էքսկավատորների, Արաքս, Արթիկ, Վաղարշապատ համայնքների համար բազմաֆունկցիոնալ մինիամբարձիչների, Արաքս համայնքի համար պտտվող պլատֆորմով անիվավոր էքսկավատորի, Ախուրյան համայնքի համար պտտվող պլատֆորմով թրթուրավոր էքսկավատորի և Մասիս համայնքի համար ավտոգրեյդերի գնում (բաղկացած 5 լոտից)»** մրցույթի վերաբերյալ 07.08.2023թ. Armeps համակարգով ստացված հարցմանը ներկայացնում ենք հետևյալ պարզաբանումը.

Հարց N 1՝

Հարգելի Գործընկեր, խնդրում եմ տրամադրել պարզաբանումներ հետևյալի մասին.

1-լոտ 2-A տեսակի մինիամբարձիչի պահանջվող կովշի տեխնիկական մասնագրում նշված է 1800-2000մմ և 800-810մմ լայնությամբ կովշ, այնուհետև նշվել է տարողության և քաշի բնութագրերը, խնդրում եմ նշել խոսքը գնում է 2 տարբեր տեսակի կովշերի մասին, եթե այո, ապա տարողությունը և քաշը որ տեսակի կովշին են վերաբերում?

Պատասխան 1՝

Հարգելի մատակարար,

Փոփոխված տեխնիկական մասնագրերը կարող եք տեսնել փոփոխված մրցութային հրավերում։

Հարց N 2՝

2-լոտ 3-տեխնիկական մասնագրերում նշվել են "կախովի սարքավորման փոխարինման փոխանցիչ" և "աշխատանքային գործիքների արագ միացման սարք"։ Այս երկու արտահայտությունները բնութագրում են միևնույն համալրող ագրեգատը։ Եթե այլ բան նկատի ունեք, խնդրում եմ պարզաբանել։

Պատասխան 2՝

Հարգելի մատակարար,

Վերը նշված մասնագրերը բնութագրում են միևնույն համալրող ագրեգատը։

Հարց N 3՝

3-լոտ 4-տեխնիկական մասնագրում որպես շերեփի տեսակ նշվել է "ծնոտաձև, բազմաֆունկցիոնալ", սովորաբար նշված տեսակի շերեփ կիրառվում է բազմաֆունկցիոնալ ամբարձիչների (էքսկավատոր-ամբարձիչների) վրա։ Առջևի շերեփ-ձևակերպումը նույնպես սխալ է կիրառել թրթուռավոր էքսկավատորի համար։ Խնդրում եմ ճշգրտել թրթուռավոր էքսկավատորի շերեփին վերաբերող տեխնիկական մասնագրերը։

Կանխավ շնորհակալություն։

Պատասխան 3՝

Հարգելի մատակարար,

Փոփոխված տեխնիկական մասնագրերը կարող եք տեսնել փոփոխված մրցութային հրավերում։

Հարգանքով,
Ռոզա Դանիելյան
№ SILD-AFG-14 մրցույթի քարտուղար
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
09.08.2023թ.